թեամբ, (եթէ չիցեն ոմանց կարեւոր արգելք գործոց կամ հիւանդութեանց)։ Եւ այսպէս սիրով Աստուծոյ գովանի բարեկարգութեամբ ցուցեալ և փայլեալ 'ի տես մերոյնոց և օտարաց, լիցին պատճառ փառաւորելոյ զԱստուած, և գովութեան ինքեանց, և ամենայն կերպիւ օգտի Ս. Աթոռոյն։

Եւ որ կարեւորն է և գլուխ ամենայն աստուածահաճոյ գործոց և յօգուտ հոգւոց 'ի փրկութիւն և Ս. Տեղեաց 'ի պայծառութիւն, և Ս. Աթոռոյն 'ի շինութիւն, եւ սէր, և ողջոյն ազգին յուրախութիւն և 'ի պարծանս, Ս. Պատրիարքն, և 'ի մէնջ արդ նշանագրեալ և կարգեալ եօթն Խորհրդականք և Ծերունի Ս. Հարք, զսէր և զխաղաղութիւն բարեմտութեամբ ընդ միմեանս ունելով, ջանացին զհասարակութիւնսն միաբանութեան եւ զուխտաւորսն, իբրեւ զեղբայր եւ զորդի շահել և համոզել 'ի բարեկարգութիւն և 'ի հնազանդութիւն, և զմեզ եւ զազգս բոլոր կենդանեօք եւ ննջեցելովք յիշատակել մաքուր աղօթիւք 'ի սրբութեան փրկաւէտ տեղիս Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ որոյ եմք յետին ծառայք։

Պօղոս Արք Եպիսկոպոս Պատրիարք Կոստանդինուպօլսոյ։
Կարապետ Աղնաւորեան։
Յովհաննէս Մահտեսի Արիստակիսեան։
Մահտեսի Յակոբ Լաթիֆեան։
Ճարտարապետ Գրիգոր։
Մահտեսի Աբրահամ։
Վառօդապետեան Վառօդապետ Սիմոն։
Մկրտիչ Արփիարիսն։
Յարութիւն Նորատունկեան։
Յարութիւն Արզումանեան։
Ճանիկ Մահտեսի Սիմոնեան։
Գրիգոր Մահտեսի Գրիգորեան։
Խաչատուր Մարտիրոսեան։
Մկրտիչ Աշնանեան։
Պօղոս Մարգարեան։
Մահտեսի Պօղոս Կելկելեան։
Բարունակ Մատինեան։
Պետրոս Յովհաննէսեան։